2 Ոչ պատվի ու փառքի համար եմ,

1. Ոչ պատվի ու փառքի համար եմ,
Տեր, ես ձգտում դեպի երկինք:
Թեև շատ դժվար է ճամփան իմ,
Բայց բավ է ինձ Քո երաշխիք:

2. Ես Քո զինվորն եմ, Աստված իմ հզոր,
Գնում եմ մարտի Քո անվամբ,
Գործիդ համար կռվում ամեն օր,
Մինչև հասնեմ երկինք ցնծմամբ:

3. Ոչ հավետ երանության համար եմ
Ես ձգտում, Տեր, դեպի երկինք,
Այլ որպեսզի Քո մեծ սերն անմար
Երգեմ, որ ցնծան Քո որդիք:

4. Կատարյալ չէ իմ երգն այս աշխարհում,
Եվ երբեմն ընդհատվում է այն,
Բայց այնտեղ՝ դրախտի շքեղ սրահում,
Պիտ հորդի ինչպես գետ օրհնության: